ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի
նախագահի 2020 թվականի
մայիսի 27-ի N 477-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Գործադիր մարմնի կողմից
28.04.2025 թ.

ՀԱՇԵՏՎՈՒԹՅՈՒՆ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԱԼԻՄՊԻԿ ԿՈՄԻՏԵ»
հասարակական կազմակերպության 2024 թ. գործունեության մասին

1. Հասարակական կազմակերպության՝		
1.1 Լրիվ անվանումը		«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԱԼԻՄՊԻԿ ԿՈՄԻՏԵ»
1.2 ՀՎՀՀ-ն		02522948
1.3 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ Ծիծեռնակաբերդի 16
1.4 Պետական գրանցման համարը		211.171.04385
1.5 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2007-04-06
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)77464476
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		www.paralympic.am
1.8 Էլեկտրոնային փոստը		kristineb@mail.ru
2 Գործադիր մարմնի ղեկավարի՝		
Անունը	Ազգանունը	Պաշտոնը
Հակոբ	Աբրահամյան	Նախագահ
3 Կանոնադրությամբ սահմանված գործունեության առարկան և նպատակը		
նպաստել հաշմանդամների սպորտի զարգացմանը ՀՀ-ում		
միավորել թիմերին, ակումբներին, հաշմանդամություն ունեցող մարզիկներին և հաշմանդամների սպորտի մասնագետներին, նպաստել նոր ակումբների և մարզադպրոցների ստեղծմանը, այդ աշխատանքներում սերտորեն համագործակցելով տարբեր մարզաձևերի ֆեդերացիաների հետ,		
աջակցել բարձր կարգի մարզիկների պատրաստման համակարգի կատարելագործմանը		
պայքարել միջազգային մարզական կազմակերպությունների կողմից արգելված խթանիչների օգտագործման դեմ		
հաշմանդամություն ունեցող անձանց և հաշմանդամների սպորտով զբաղվողների համար տարբեր միջոցառումների և հանգստի կազմակերպում,		
օժանդակել հաշմանդամների սպորտով զբաղվողների սոցիալական, ֆիզիկական, հոգեբանական, կրթական և բժշկական վերականգնողական հարցերի լուծմանը,		
աջակցել հաշմանդամների սպորտով զբաղվողների համար աշխատատեղերի ստեղծման գործընթացին		
նպաստել հաշմանդամների սպորտի նյութատեխնիկական բազայի հետագա զարգացմանը		
ցուցաբերել նյութական, դրամական և բարոյական օգնություն հաշմանդամների սպորտով զբաղվողներին,		
իրականացնել օրենքով չարգելված այլ գործունեություն:		
4 Հասարակական կազմակերպության՝		
4.1 Անդամների թիվը		28
4.2 Կամավորների թիվը		21
5 Հաշվետու տարվա ընթացքում գումարված ժողովների քանակը		2

6. Իրականացված ծրագրեր՝

Հ/Հ	6.1 Ծրագրի անվանումը	6.2 Վայրը	6.3 Նպատակը	6.4 Կարգավիճակը
1	Պարալիմպիկ խաղերին Հայաստանի Պարալիմպիկ հավաքական թիմի մասնակցություն	ՖՐԱՆՍԻԱ-ՓԱՐԻԶ	ԿԳՄՍ-ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹԻՄԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ	Ավարտված
2	Անվասայլակով բասկետբոլի ՀՀ առաջնություն	ՀԱՅԱՍՏԱՆ	ԿԳՄՍ-ԱՆՎԱՍԱՅԼԱԿՈՎ ԲԱՍԿԵՏԲՈԼԻ ՀՀ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ	Ավարտված

3	Պարաաթլետիկայի աշխարհի առաջնություն	ՃԱՊՈՆԻԱ, ԿՈԲԵ	ԿԳՄՍ-ՊԱՐԱԱԹԼԵՏԻԿԱՅԻ ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՊՈՆԻԱ ԿՈԲԵ	Ավարտված
4	Պարաաթլետիկայի աշխարհի աշխարհի գավաթի խաղարկություն	ՇՎԵՅԱՐԻԱ, ՆՈԹՎԻԼ	ԿԳՄՍ-ԱՇԽԱՐՀԻ ԳԱՎԱԹԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ	Ավարտված
5	Պարա փաուերլիֆտիգի աշխարհի գավաթի հասարակական գավաթի միջոցով	ՎՐԱՍՏԱՆ, ԹԲԻԼԻՍԻ	ԿԳՄՍ-Պարափաուերլիֆտիգի աշխարհի գավաթի խաղարկություն	Ավարտված
6	Աշխարհի գավաթի մրցաշար	ԴՈՒԲԱՅ	ԱՇԽԱՐՀԻ ԳԱՎԱԹԻ ՄՐՑԱՇԱՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ	Ավարտված
7	ՊԱՐԱ ԱԹԼԵՏԻԿԱՅԻ ԳՐԱՆՊՐԻ ՄՐՑԱՇԱՐ	ՄԱՐԱՔԵՇ	ՊԱՐԱ ԱԹԼԵՏԻԿԱՅԻ ԳՐԱՆՊՐԻ ՄՐՑԱՇԱՐԻ ՄԱՅՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ	Ավարտված
8	ՊԱՐԱՄԱՐԶԱԿԱՆ 20-ՐԴ ՓԱՌԱՏՈՆ	ՀԱՅԱՍՏԱՆ	ՊԱՐԱՄԱՐԶԱԿԱՆ 20-ՐԴ ՓԱՌԱՏՈՆԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ	Ավարտված
9	ՇԱԽՄԱՏԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ	ՀԱՅԱՍՏԱՆ	ՇԱԽՄԱՏԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ	Ավարտված

7. Հանրային միջոցներով իրականացված ծրագրեր՝

Հ/Հ	7.1 Ծրագրի անվանումը	7.2 Վայրը	7.3 Կարգավիճակը	7.4 Նպատակը	7.5 Հիմնական արդյունքները
1	Պարալիմպիկ խաղերին Հայաստանի Պարալիմպիկ հավաքական թիմի մասնակցություն	ՖՐԱՆՍԻԱ-ՓԱՐԻԶ	Ավարտված	ԿԳՄՍ-ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹԻՄԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ	Ադապտիվ սպորտին առնչվող ծառայություններ, Իրականացված է
2	Անվասայլակով բասկետբոլի ՀՀ առաջնություն	ՀԱՅԱՍՏԱՆ	Ավարտված	ԿԳՄՍ-ԱՆՎԱՍԱՅԼԱԿՈՎ ԲԱՍԿԵՏԲՈԼԻ ՀՀ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ	Ադապտիվ սպորտին առնչվող ծառայություններ, Իրականացված է
3	Պարաաթլետիկայի աշխարհի առաջնություն	ՃԱՊՈՆԻԱ, ԿՈԲԵ	Ավարտված	ԿԳՄՍ-ՊԱՐԱԱԹԼԵՏԻԿԱՅԻ ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՊՈՆԻԱ ԿՈԲԵ	Ադապտիվ սպորտին առնչվող ծառայություններ, Իրականացված է
4	Պարաաթլետիկայի աշխարհի աշխարհի գավաթի խաղարկություն	ՇՎԵՅԱՐԻԱ, ՆՈԹՎԻԼ	Ավարտված	ԿԳՄՍ-ԱՇԽԱՐՀԻ ԳԱՎԱԹԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ	Ադապտիվ սպորտին առնչվող ծառայություններ, Իրականացված է
5	Պարա փաուերլիֆտիգի աշխարհի գավաթի հասարակական գավաթի միջոցով	ՎՐԱՍՏԱՆ, ԹԲԻԼԻՍԻ	Ավարտված	ԿԳՄՍ-Պարափաուերլիֆտիգի աշխարհի գավաթի խաղարկություն	Ադապտիվ սպորտին առնչվող ծառայություններ, Իրականացված է

8. Տարեկան մուտքեր՝

8.1 Դրամական միջոցները	32,828,688
8.2 Գույքը	
Ընդամենը	32,828,688

9. Հանրային միջոցներ և ստացման աղբյուրներ

Հ/Հ	9.1 Դրամական միջոցները	9.3 Ստացման աղբյուրները
1	19,633,000	ՀՀ կրթության ու գիտության նախարարություն Ադապտիվ սպորտին առնչվող ծառայություն
Հ/Հ	9.2 Գույքը	
1		
Ընդամենը	19,633,000	

10. Օգտագործված դրամական միջոցները և/կամ շարժական/անշարժ գույքը՝

10.1 Դրամական միջոցները	33,360,397
10.2 Գույքը	

Հ/Հ	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
1		
Ընդամենը		33,360,397

11. Հանրային դրամական միջոցների և/կամ տրամադրված գույքի օգտագործումը, ծախսերը՝

11.1 Դրամական միջոցները	16,652,461
11.2 Գույքը	

Հ/Հ	11.2.1 Տեսակը	11.2.2 Արժեքը
1		
Ընդամենը		16,652,461

12. Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու՝

Հ/Հ	12.1 Տեսակը	12.2 Ստացված շահույթը	12.3 Շահույթի օգտագործումը

1			
Ընդամենը		0	
Նշումներ			
Հանրային միջոցներից ստացված գումարը կազմում է 19,633,000, սակայն օգտագործվել է 16,652,461, մնացյալ մասը ետ է վերադարձվել			

Կից ներկայացվում է՝

Աուդիտորի եզրակացություն՝ _____0_____ էջից

Էջերի քանակը

Գործադիր մարմնի ղեկավար _____

ստորագրություն, անունը, ազգանուն

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրություն, անունը, ազգանուն

ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԱԼԻՄՊԻԿ ԿՈՄԻՏԵ» ՀԿ

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 27-Ի N 477-Ն ՀՐԱՄԱՆԻ ՀԱՄԱՁԱՅՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի

Digitally signed by BABAYAN KRISTINE 6507800465
Date: 2025.05.13 23:23:28 AMT

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԱԼԻՄՊԻԿ ԿՈՄԻՏԵ ՀԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 5

Անկախ աուդիտորական եզրակացություն

"Հայաստանի ազգային պարալիմպիկ կոմիտե" հասարակական կազմակերպության ղեկավարությանը և խորհրդին

Կարծիք

Մեր կողմից իրականացվել է "Հայաստանի ազգային պարալիմպիկ կոմիտե" հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն)՝ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի կողմից 2020թ. մայիսի 27-ի N477-Ն հրամանով հաստատված հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվությունը 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար, ընդ որում այդ հաշվետվությունը ներառում է նույն տարվա համար պետական կամ համայնքային միջոցների և այլ աղբյուրներից ստացված միջոցների օգտագործման վերաբերյալ հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության սեղմ բնութագիրը և բացատրական այլ նյութերը (այսուհետ՝ Հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվություններ):

Մեր կարծիքով՝

- կից ներկայացված Հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունները, որոնք ենթարկվել են աուդիտի, տալիս են 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում հանրային և այլ միջոցներով իրականացված ծրագրերի շրջանակներում միջոցների մուտքերի, ինչպես նաև օգտագործված դրամական միջոցների ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն հաշվապահական հաշվառման դրամարկղային սկզբունքի, ինչպես նաև դրամաշնորհային համաձայնագրերի համապատասխան դրույթների:

- Կազմակերպությունը դրամաշնորհների ձևով ստացած հանրային և այլ միջոցները օգտագործել է միայն դրամաշնորհային պայմանագրերում ներկայացված ծրագրերի նպատակների համար:

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտների (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է մեր հաշվետվության՝ "Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար" հատվածում: Մենք անկախ ենք Կազմակերպությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական

Crowe and Asatryans LLC
"Dom Moskvy" Business Center,
7, Argishti str., 2nd floor,
Yerevan, 0015, Armenia
T. +(374) 60 53 23 23
+(374) 99 54 33 88
E-mail: general@crowe.am
www.crowe.com

Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ
"Դոմ Մոսկվի" Բիզնես Կենտրոն,
Արգիշտի փող., 7, 2-րդ հարկ,
ք. Երևան, 0015, ՀՀ
Հ. +(374) 60 53 23 23
+(374) 99 54 33 88
E-mail: general@crowe.am
www.crowe.com

հաշվետվությունների՝ մեր աուդիտի համար կիրառելի վարքագծի պահանջների, և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն նշված պահանջների և ՀԷՄՍԽ կանոնների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Հանգամանքների լուսաբանում

Ցանկանում ենք ուշադրություն հրավիրել Հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններին, որտեղ ներկայացված է հաշվապահական հաշվառման հիմունքը: Հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են՝ օժանդակելու Կազմակերպության ղեկավարությանը՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեին ֆինանսական հաշվետվությունների ներկայացման պահանջներին համապատասխանելու համար: Ուստի, Հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունները չեն կարող կիրառվել այլ նպատակով: Մեր կարծիքը չի ձևափոխվել այս հանգամանքի առնչությամբ:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Կազմակերպության ղեկավարությունը պատասխանատու է սույն Հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունները ծանոթագրություններում նկարագրված հաշվապահական հաշվառման դրակարկղային սկզբունքի, ինչպես նաև դրամաշնորհային պայմանագրերի համապատասխան դրույթների համաձայն կազմելու և ճշմարիտ ներկայացնելու համար:

Կազմակերպության ղեկավարությունը պատասխանատու է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի կողմից 2020թ. մայիսի 27-ի N 477-Ն հրամանով հաստատված "Հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվության" պատրաստման համար, ինչպես նաև այնպիսի ներքին վերահսկողության համար, որը ղեկավարության որոշմամբ անհրաժեշտ է ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը հնարավոր դարձնելու համար, որոնք զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ նրանից դրանք առաջացել են խարդախության կամ սխալի հետևանքով, թե ոչ: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվություններ, որոնք զերծ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, և ներկայացնել աուդիտորական եզրակացություն, որը ներառում է մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը ամենաբարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական

հաշվետվություններն օգտագործողների՝ սույն ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական թերահավատություն: Ի լրումն՝

- Բացահայտում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվություններում առկա էական խեղաթյուրումների ռիսկը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ, կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- Ձեռք ենք բերում աուդիտին առնչվող ներքին հսկողության համակարգի մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Կազմակերպության ներքին հսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների և առնչվող բացահայտումների հիմնավորվածությունը:
- Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք , թե արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որը կարող է էական կասկած առաջացնել Կազմակերպության անընդհատ գործելու կարողության նկատմամբ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա պարտավոր ենք աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդպիսի բացահայտումները համապատասխան չեն, ձևափոխել մեր աուդիտորական եզրակացությունը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Կազմակերպությանը դադարեցնել գործունեության անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Crowe

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողության համակարգին վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Մենք կառավարման օղակներում գտնվող անձանց նաև տրամադրում ենք հայտարարություն, ըստ որի՝ մենք պահպանել ենք անկախության վերաբերյալ վարքագծի պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք, ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա, և, որտեղ կիրառելի է, նախազգուշական միջոցառումների մասին:

Կառավարման օղակներում գտնվող անձանց հաղորդված հարցերից մենք որոշում ենք այն հարցերը, որոնք համարվել են առավել նշանակալի ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում, և, հետևաբար, հանդիսանում են աուդիտի առանցքային հարցեր: Այս հարցերը նկարագրում ենք աուդիտի եզրակացությունում, եթե օրենսդրությամբ կամ իրավական ակտերով չի արգելվում տվյալ հարցի հրապարակային բացահայտումը, կամ, երբ խիստ բացառիկ հանգամանքներում, որոշում ենք, որ տվյալ հարցը չպետք է ներկայացվի աուդիտորի եզրակացությունում, քանի որ կարող է ողջամտորեն ակնկալվել, որ դրա ներկայացման հետ կապված բացասական հետևանքները ավելի շատ կլինեն, քան դրա ներկայացմամբ պայմանավորված հանրային օգուտը:

Այս աուդիտի առաջադրանքի պատասխանատուն Ալբերտ Ասատրյանն է:

Ալբերտ Ասատրյան

Տնօրեն-բաժնետեր,
Առաջադրանքի պատասխանատու

29 ապրիլի 2025թ.

Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԱԼԻՄՊԻԿ ԿՈՄԻՏԵ ՀԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

"Հայաստանի ազգային պարալիմպիկ կոմիտե" Հասարակական Կազմակերպությունը (այսուհետ' Կազմակերպություն) գրանցվել է 2007թ. ապրիլի 6-ին, գրանցման համար' 211.171.04385: ՀԱՊԱԿ-ի կառավարման մարմիններն են Ժողովը, Խորհուրդը, նախագահը և փոխնախագահը: "Հայաստանի ազգային պարալիմպիկ կոմիտե" Հասարակական Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրյա պետությունների քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց և իրավաբանական անձանց հասարակական միավորում է, որն ունի ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակ: Կազմակերպությունը ներկայացնում է հաշմանդամ մարզիկներին պարալիմպիկ շարժումներում:

Կազմակերպության գործունեության նպատակներն են `

- Նպաստել պարալիմպիկ շարժման և հաշմանդամների սպորտի զարգացմանը Հայաստանի Հանրապետությունում
- Խթանել հաշմանդամ մարզիկների սպորտով զբաղվելը և պարալիմպիկ շարժմանը մասնակցելը՝ առանց կրոնական, քաղաքական, տնտեսական, գենդերային, ռասսայական և այլ տիպի խտրականության,
- Աջակցել պարալիմպիկ շարժման, զանգվածային լրատվական միջոցներով դրա իդեալների, սկզբունքների, միջոցառումների մշտական և համատարած լուսաբանմանը, Ապահովել արդարության ոգու գերիշխանությունը, արգելել բռնությունը, վերահսկել մարզիկների առողջության ռիսկերը և պարալիմպիկ շարժման մարզաձևերում հիմնարար էթիկայի կանոնների պահպանումը,
- Կոորդինացնել բոլոր կազմակերպությունների ջանքերը՝ ուղղված հաշմանդամների Պարալիմպիկ սպորտի աջակցմանը,
- ՀՀ օրենսդրության համաձայն նպաստել Հայաստանի հաշմանդամների Պարալիմպիկ սպորտի միասնական և բարձր կազմակերպվածությամբ համակարգի ստեղծմանը,
- Ձգտել Պարալիմպիկ խաղերին հայկական մարզիկների արժանապատիվ մասնակցությանը,
- Ապահովել ՄՊԿ կանոնների ժողովածուով սահմանված պահանջների պահպանումը, այդ թվում ՄՊԿ-ի Հակադոպինգային օրենսգրքի, ՄՊԿ-ի դասակարգման կանոնակարգերի և Բժշկական կանոնակարգերի պահանջների պահպանումը,

- Նպաստել դոպինգի դեմ պայքարին,
- Միջազգային Պարալիմպիկ շարժման հետ կապված և ՄՊԿ-ի կողմից կամ վերջինիս հովանավորությամբ իրականացվող բոլոր միջոցառումներում ներկայացնել Հայաստանի Հանրապետության շահերը,
- Միավորել թիմերին, ակումբներին, հաշմանդամություն ունեցող մարզիկներին և հաշմանդամների սպորտի մասնագետներին,
- Նպաստել նոր ակումբների և մարզադպրոցների ստեղծմանը, այդ աշխատանքներում սերտորեն համագործակցելով տարբեր մարզաձևերի ֆեդերացիաների հետ,
- Կազմակերպել հաշմանդամություն ունեցող անձանց և հաշմանդամների սպորտով զբաղվողների համար հանգստի տարբեր միջոցառումներ,
- Օժանդակել հաշմանդամների սպորտով զբաղվողների սոցիալական, ֆիզիկական, հոգեբանական, կրթական և բժշկական վերականգնողական հարցերի լուծմանը,
- Աջակցել սպորտով զբաղվող հաշմանդամների համար աշխատատեղերի ստեղծման գործընթացին,
- Նպաստել հաշմանդամների սպորտի նյութատեխնիկական բազայի հետագա զարգացմանը,
- Ցուցաբերել նյութական, դրամական և բարոյական օգնություն սպորտով զբաղվող հաշմանդամներին,
- Իրականացնել օրենքով չարգելված այլ գործունեություն,
- Պարալիմպիկ Խաղերին մասնակցելու նպատակով Պարալիմպիկ մարզաձևերի սպորտի Հայաստանի հավաքական թիմի թեկնածուների ընտրանքի և Հայաստանի հավաքական թիմերի ձևավորման համար միջոցառումների, ակցիաների և այլ գործողությունների իրականացումը:

Կազմակերպության հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Ծիծեռնակաբերդի 16:

2. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

2.1. Համապատասխանություն

Հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունը պատրաստվել է հաշվապահական հաշվառման դրամարկղային սկզբունքով: Համաձայն հաշվապահական հաշառման այս սկզբունքի՝ դրամական մուտքերը ճանաչվում են ստացման պահին, ծախսերը ճանաչվում են վճարման պահին:

2.2 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Կազմակերպության գործառնական արժույթը: Սույն Ֆինանսական հաշվետվությունը ներկայացված է հայկական դրամով:

3. Ծրագրի ֆինանսավորումը

Համաձայն 2024թ. փետրվարի 22-ի ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և Կազմակերպության միջև կնքված պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին թիվ ՍՊԴ_27-2024 պայմանագրի' ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը Կազմակերպությանը հատկացրել է 19,644 հազար դրամ:

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 13.05.2025 23:22